

5.4. Իրավախախտումներ

Հանցագործություններ: Ըստ ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանության ամփոփ տեղեկատվության, հանրապետությունում ըստ առանձին հանցատեսակների խմբերի, գրանցված հանցագործությունների դեպքերի մասին 2008թ. հունվար-սեպտեմբերին տվյալները ներկայացված են ստորև աղյուսակներում.

Գրանցված հանցագործությունների քանակական բաշխվածությունն ըստ հանցատեսակների, 2008թ. հունվար-սեպտեմբեր

Հանցագործություններ		Ընդամենը, միավոր	Հավելածը (նվազումը «-» նշանով) 2007թ. հունվար-սեպտեմբերի համեմատ, %
Գրանցված հանցագործությունների ընդհանուր քանակը		6825	4.8
այդ թվում՝	ոչ մեծ ծանրության	1817	- 0.3
	միջին ծանրության	2012	1.6
	ծանր	2854	11.0
	առանձնապես ծանր	142	4.4
Հանցագործությունների ընդհանուր քանակից՝ կատարվել է հրազենի, ռազմամթերքի գործադրմամբ		67	- 9.5
Մարդու (անձի) դեմ ուղղված հանցագործություններ		793	11.5
այդ թվում՝	սպանություն	62	21.6
	սպանության փորձ	23	- 8.0
	դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելը	370	- 3.6
	որից՝ ծանր	168	28.2
	սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններ	49	2.0 անգամ
	որից՝ բռնաբարություն և բռնաբարության փորձ	14	2007թ. հունվար-սեպտեմբերին արձանագրվել է 5 դեպք
	մարդու (անձի) դեմ ուղղված այլ հանցագործություններ	289	27.9
Հասարակական անվտանգության, հասարակական կարգի և բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններ		1313	- 8.9
այդ թվում՝	բանդիտիզմ	-	2007թ. հունվար-սեպտեմբերին արձանագրվել է 1 դեպք
	հրազեն, ռազմամթերք պատրաստելը և ապօրինի շրջանառությունը	179	14.7
	ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը	256	- 19.7
	որից՝ մահվան ելքով	169	0
	խուլիգանություն	216	16.8
	որից՝ կատարվել է զենքի գործադրմամբ	34	30.8
	թմրամիջոցների հետ կապված հանցագործություններ	549	- 21.8
	որից՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը	413	- 1.0
	դրանից՝ իրացնելու նպատակով	170	14.1
	հասարակական անվտանգության, հասարակական կարգի և բնակչության առողջության դեմ ուղղված այլ հանցագործություններ	113	44.9
Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ		2996	6.8
այդ թվում՝	պետական կամ հանրային գույքի հափշտակություններ	219	- 11.7
	որից՝ զողություն	177	- 14.9
	ավազակություն	1	2007թ. հունվար-սեպտեմբերին դեպք չի արձանագրվել
	խարդախություն	15	15.4
	յուրացում կամ վատնում	26	- 3.7
	անձնական գույքի հափշտակություններ	2573	8.4
	որից՝ ավազակություն	110	2.0 անգամ
	կողոպուտ	157	78.4
	զողություն	2027	7.0
	դրանից՝ բնակարանային	645	- 0.9

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Հանցագործություններ		Ընդամենը, միավոր	Հավելածը (նվազումը «-» նշանով) 2007թ. հունվար-սեպտեմբերի համեմատ, %
	խարդախություն	242	- 21.9
	յուրացում կամ վատնում	37	48.0
	տրանսպորտային միջոցներ փախցնելը	51	- 46.9
	սեփականության դեմ ուղղված այլ հանցագործություններ	153	73.9
Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ		313	51.9
այդ թվում՝	կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելը, պահելը կամ իրացնելը	59	2.0 անգամ
	տնտեսական գործունեության դեմ ուղղված այլ հանցագործություններ	254	43.5
Պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություններ		1388	7.7
այդ թվում՝	իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը	73	3.8 անգամ
	պաշտոնեական լիազորություններ չարաշահելը և անցնելը	56	3.5 անգամ
	կաշառք ստանալը, տալը, կաշառքի միջնորդությունը	49	2007թ. հունվար-սեպտեմբերին արձանագրվել է 7 դեպք
	պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված այլ հանցագործություններ	1210	- 3.0
Այլ հանցագործություններ		22	- 62.1
Հանցագործությունների ընդհանուր քանակից՝ կոռուպցիոն բնույթի հանցագործություններ		429	2.3 անգամ

Գրանցված հանցագործությունների քանակական բաշխվածությունն ըստ ՀՀ մարզերի, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության տրանսպորտային վարչության և «Զվարթնոց» օդանավակայանի, 2008թ. հունվար-սեպտեմբեր

	Ընդամենը, միավոր	Հավելածը (նվազումը «-» նշանով) 2007թ. հունվար- սեպտեմբերի համեմատ, %
ք. Երևան	3465	11.4
Արագածոտն	226	14.1
Արարատ	393	6.5
Արմավիր	364	- 4.2
Գեղարքունիք	264	19.5
Լոռի	603	2.9
Կոտայք	521	- 4.9
Շիրակ	427	- 9.9
Սյունիք	195	- 18.8
Վայոց ձոր	81	0
Տավուշ	192	- 1.5
ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության տրանսպորտային վարչություն և «Զվարթնոց» օդանավակայան	94	- 12.1
Ընդամենը ՀՀ	6825	4.8

Մաքսային իրավախախտումներ: Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ամփոփ տեղեկատվության, 2008թ. հունվար-սեպտեմբերին համակարգում մուտքագրվել է մաքսային օրենսդրության խախտման վերաբերյալ 36 նյութ: Մուտքագրված բոլոր նյութերն ուղարկվել են այլ մարմին՝ նախաքննության: Հետաքննվող գործերով առնչվել է 37 մարդ:

Մաքսային իրավախախտումների համեմատական ցուցանիշները, 2008թ. հունվար-սեպտեմբեր

(հավելածը /նվազումը «-» նշանով/)

	Ընդամենը	Հունվար-սեպտեմբերի համեմատ, %		
		2005թ.	2006թ.	2007թ.
Մուտքագրված նյութերի քանակը, միավոր	36	- 18.2	5.9	24.1
Գործերով առնչվող անձանց թվաքանակը, մարդ	37	- 15.9	8.8	27.6

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Հարկային իրավախախտումներ: Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ամփոփ տեղեկատվության, 2008թ. հունվար-սեպտեմբերին համակարգում մուտքագրվել է 270 հետաքննության նյութ՝ կապված հարկային օրենսդրության խախտումների հետ և 2007թ. նյութերի մնացորդի հետ կազմել 316: Այդ նյութերն ունեցել են հետևյալ շարժը. 31-ն ուղարկվել է այլ մարմին նախաքննության, 36-ի վերաբերյալ մերժվել է քրեական գործի հարուցումը, 129-ի նկատմամբ հարուցվել է քրեական գործ, 48-ը՝ վերադարձվել է ըստ ենթակայության: Նյութերի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում կազմել է 72: Մուտքագրված գործերով առնչվել է 510 մարդ, վերականգնվել է 300.7 մլն. դրամ:

Հարկային իրավախախտումների համեմատական ցուցանիշները, 2008թ. հունվար-սեպտեմբեր

(հավելածր /նվազումը «-» նշանով/)

	Ընդամենը	Հունվար-սեպտեմբերի համեմատ, %		
		2005թ.	2006թ.	2007թ.
Առկա նյութերի քանակը, <i>միավոր</i>	316	- 22.4	- 36.9	54.1
Գործերով առնչվող անձանց թվաքանակը, <i>մարդ</i>	510	7.1	- 23.0	55.0
Վերականգնված գումարը, <i>մլն. դրամ</i>	300.7	68.9	48.9	64.3

Հարկային իրավախախտման գործերով առնչվող անձանց թվաքանակի տոկոսային բաշխվածությունն ըստ հանցատեսակների, 2008թ. հունվար-սեպտեմբեր

(%)

	Գործերով առնչվող անձանց թվաքանակի բաշխվածությունն ընդհանուրի նկատմամբ
Հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը	76.1
Ապօրինի ձեռնարկատիրությունը	13.5
Կեղծ ձեռնարկատիրությունը	4.9
Կեղծ գինի, կեղծ օղի կամ ալկոհոլային կեղծ այլ խմիչք պատրաստելը և իրացնելը	2.0
Ակցիզային դրոշմանիշներ կեղծելը կամ իրացնելը	0.4
Կեղծ սնանկությունը	0.2
Կեղծ վճարային փաստաթղթեր պատրաստելը կամ իրացնելը	0.2
Այլ	2.7
Ընդամենը	100.0